Վեհափառ Հայրապետն ընդունեց Հայ Փոինք ծուխի ուխտավորներին

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒԲԵՐ

ՀԱՅ ՓՈՒՆԹ ԾՈՒԽԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Հուլիսի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արեւելյան թեմի Հայ Փոինթ ծուխի մի խումբ ուխտավորների՝ ուղեկցությամբ Հեյվըրհիլ քաղաքի (Մասաչուսեթսի նահանգ) Հայ Փոինթ ծուխի հոգեւոր հովիվ Տ. Վարդ քահանա Գյոզալյանի: Հանդիպման սկզբում Տ. Վարդը Նորին Սրբությանը ներկայացրեց ուխտավորներին՝ հայցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու հայրական պատգամը:

Ողջունելով ուխտավորների այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց, որ հայ ժողովրդի զավակներն այցելում են հայոց հոգեւոր կենտրոն՝ զորացնելու հավատարմությունն ու նվիրվածությունը Հայ Եկեղեցու հանդեպ: Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց հայրենիքից հեռու ապրող հայորդիների նախանձախնդիր ոգին, որով նրանք փարված են ազգային-հայրենական կյանքին, սրբություններին ու ավանդույթներին: Նորին Սրբությունը հորդորեց ուխտավորներին համախումբ մնալ Եկեղեցու շուրջ եւ հայաշունչ ու Քրիստոսասեր ոգով շարունակել նվիրյալ ծառայությունը հայրենի կյանքում: Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ Աստված բարի արդյունքներով առատացնի ուխտավորների առաքելությունը Հայրենիքի եւ Եկեղեցու առջեւ: Հանդիպման ավարտին Հայ Փոինթ ծուխի ուխտավորներն իրենց հերթին շնորհակալություն հայտնեցին Մայր Աթոռում ջերմ ընդունելության համար:

ԲՈՒԴԱՊԵՇՏՈՒՄ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՍԿՍԵՑ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ 14-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հուլիսի 3-ին Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում սկսվեց Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի 14-րդ համագումարը, որի ընթացքում քննարկվեցին Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի վերակազմավորման նպատակով ստեղծված «Ուփսալայի» փաստաթուղթը, կատարվեցին փոփոխություններ կոնֆերանսի սահմանադրության եւ կանոնադրությունների մեջ, ընտրվեց կառույցի ապագա ղեկավար մարմինը եւ առաջիկա տարիների համար որոշվեցին կոնֆերանսի գործունեության գերակա ուղղությունները:

Համագումարին Հայ Առաքելական Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մասնակցում էր հինգ հոգիանոց պատվիրակությամբ, որի կազմում էին Տավուշի թեմի առաջնորդ, Հայաստանյան Աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Տ. Եզնիկ արքեպ. Պետրոսյանը, Արթիկի թեմի առաջնորդ, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպ. Մանուկյանը, Հարավային Ֆրանսիայի առաջնորդական փոխանորդ Տ. Մեսրոպ վ. Պարսամյանը, Միլանի եւ Իտալիայի հայոց հոգեւոր հովիվ Տ. Թովմա աբեղա Խաչատրյանը, Թեսաղոնիկեի համալսարանի ատվածաբանական ֆակուլտետի դոկտորանտ, պատմական գիտությունների թեկնածու Մարիաննա Ապրեսյանը:

Հուլիս 3-ին, Բուդապեշտի Ռեֆորմական եկեղեցում տեղի ունեցավ համագումարի բաց-

ման արարողությունը: Բացման աղոթքին հետեւեց համագումարի բացման նիստը, որի ընթացքում Տ. Հովակիմ եպ. Մանուկյանը ներկաներին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի ուղերձը համագումարի առիթով: Հայրապետական ուղերձում մասնավորապես ասված է. «Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի այս համագումարը կարեւոր իրադարձություն է էկումենիկ շարժման եւ հատկապես Կոնֆերանսին անդամակցող եկեղեցիների համար՝ հնարավորություն ընձեռելով անդրադառնալու եկեղեցիների համագործակցության անցած ճանապարհին, կոնֆերանսի վերջին տարիների գործունեությանը եւ ձեռքբերումներին, ինչպես եւ՝ այսօր եկեղեցիների եւ ողջ մարդկության առջեւ ծառացող հրամայականներին եւ փնտրելու եկեղեցիների հարաբերությունների զորացման ուղիներ՝ առավել արդյունավորելու համար տերունապատվեր մեր առաքելությունը՝ հանուն Աստծո փառքի եւ Տիրոջ կենարար Ավետարանի քարոզչության: Այս համախմբումը բարեպատեհ առիթ է նաեւ միասին աղոթք վերառաքելու առ Բարձրյալն Աստված համայն մարդկության բարօրության, խաղաղության ու բարեկամության, նաեւ՝ եկեղեցիների եղբայրական արգասալի համագործակցության համար:

Ողջունելի է, որ Եւրոպական Եկեղեցիների ներկա համագումարը նպատակ ունի նաեւ վերակազմավորելու կոնֆերանսի կառույցը՝ հաշվի առնելով Եկեղեցու եւ էկումենիկ շարժման առջեւ մեր օրերում բարձրացող մարտահրավերները: Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսը դասամյակների հարուստ փորձառություն ունի՝ Եկեղեցիների համագործակցության միջոցով ծառայելու մարդկության խաղաղ ու բարօր կյանքի կերտմանը, Եւրոպայում եւ ողջ աշխարհում հոգեւոր արժեքների ամրապնդմամբ՝ հաշտության եւ արդարության հաստատմանը:

Մենք խիստ մտահոգված ենք Սիրիայում արդեն երրորդ տարին շարունակվող հակամարտությամբ, որի արդյունքում հազարավոր մարդիկ կորցրել են իրենց կյանքը, ունեցվածքը եւ հարազատներին: Ամեն ջանք պետք է ներդրվի օր առաջ արյունահեղության դադարեցման եւ խաղաղության հաստատման նպատակով:

Մեր ժողովրդի հոգերն ու ցանկությունները չեն տարբերվում աշխարհի բոլոր խաղաղասեր ժողովուրդների ցանկություններից եւ նպատակներից: Մենք կարիք ունենք այնպիսի աշխարհի, որտեղ չկան պատերազմներ, մարդկային տառապանք, անարդարություն, մարդու իրավունքների ոտնահարում, բնության չարաշահում, ընկերային-տնտեսական ճգնաժամեր: Մենք կարիք ունենք աշխարհի, որտեղ քաղաքականությունն առաջնորդվում է արդարության ու ճշմարտության սկզբունքներով եւ ոչ աշխարհաքաղաքական նեղ շահերի եւ նյութական հետաքրքրությունների առաջնայնությամբ: 2015 թ. մեր ժողովուրդը Հայաստանում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում եւ աշխարհի բազում երկրներում հիշատակելու է 1915 թ. Օսմանյան Թուրքիայի իրականացրած Հայոց ցեղասպանության հարյուրամյակը՝ միաժամանակ իր բողոքի ձայնը բարձրացնելով մարդկության հանդեպ կատարված հանցագործությունների դատապարտման գործընթացում դրսեւորվող մերժողականության դեմ: Մեր ժողովրդի սպասումն է, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը կգտնի արդար հանգուցալուծում՝ տեղի հայության ինքնորոշման արդար իրավունքի ճանաչմամբ, որը կնպաստի տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ու ամրապնդմանը: Հակառակ այս սպասումների՝ վերջերս էր, որ ականատեսը եղանք արտառոց եւ պախարակելի մի փաստի. Բուդապեշտում ՆԱՏՕ-ի դասընթացներին մասնակցող եւ նույն առաքելությամբ այնտեղ գտնվող հայ սպային քնած ժամանակ կացնահարած ու ցմահ ազատազրկման դատապարտված Ռ. Սաֆարովը Հունգարիայի եւ Ադրբեջանի գործարքի արդյունքում հանձնվեց Ադրբեջանին, ուր մարդասպանն արդարացվեց եւ հերոսացվեց: Սա, իհարկե, դատապարտվեց առաջադեմ երկրների, միջազգային կառույցների ղեկավարների եւ հոգեւոր առաջնորդների, այդ թվում՝ Հունգարիայի եկեղեցիների կողմից:

Հայ Առաքելական Եկեղեցին նախանձախնդիր է առավելագույն իր ներդրումը բերելու Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի այն առաքելությանը, որը միտված կլինի նպաստելու այսպիսի մարտահրավերների հաղթահարմանը: Մեզ համար ուրախալի կլինի տեսնել Եվրոպական եկեղեցիների այն կոնֆերանսը, որտեղ ընթացող եկեղեցիների երկխոսությունը եւ ներդրած միասնական ջանքերը կնպաստեն աշխարհիկացող մեր իրականության մեջ կրոնի հասարակական դերի

բարձրացմանը, հոգեւոր արժեքների ամրապնդմանը, կրոնական ազատությունների հարգմանը եւ աշխարհում բռնությունների, հակասությունների ու հակամարտությունների հաղթահարմանը»:

Հուլիսի 8-ին համագումարի շրջանակներում առավոտյան ժամերգությունը կատարվեց հայկական ծեսով:

***

Նույն օրը Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում իր աշխատանքներն ավարտեց Եւրոպական Եկեղեցիների կոնֆերանսի (ԵԵԿ) 14-րդ համագումարը: Համագումարի ընթացքում ընդունվեց ԵԵԿ նոր կանոնադրությունը, անդրադարձ կատարվեց Եւրոպայում ֆինանսական ճգնաժամին, Եւրոպական ընկերային խառնիային, Մերձավոր Արեւելքում՝ հատկապես Սիրիայում եւ Եգիպտոսում տիրող իրավիճակին, ինչպես նաեւ Թուրքիայում եւ Հյուսիսային Կիպրոսում կրոնական ազատությունների հիմնախնդիրներին:

Համագումարն ընտրեց Եւրոպական Եկեղեցիների կոնֆերանսի ղեկավար մարմին, որի կազմում որպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ ընտրվեց Տավուշի թեմի առաջնորդ, Հայաստանի Ապրվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Տ. Եզնիկ արքեպ. Պետրոսյանը:

Ժողովի ընթացքում Հայ Եկեղեցու պատվիրակները մասնակցեցին զանազան հանձնախմբերի աշխատանքներին. Տ. Եզնիկ արքեպ. Պետրոսյանը հինգերորդ աշխատանքային խմբի համակարգողն էր, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպ. Մանուկյանը հասարակական հարցերի հանձնախմբում էր, Տ. Մեսրոպ վ. Պարսամյանն ընդգրկված էր համագումարի պատգամը նախապատրաստող հանձնախմբում, իսկ Մարիաննա Ապրեսյանը՝ թեկնածուներ առաջադրող հանձնախմբում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հուլիսի 11-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից շնորհավորական գիր է հղել Տ. Քրիստոֆեր եպիսկոպոս Հիլին Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի նախագահ ընտրվելու առիթով:

Վեհափառ Հայրապետի շնորհավորական նամակում մասնավորապես ասված է. «...Ձեր ընտրությունը որպես Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի նախագահ մի նոր իրեղեն առիթ է, որպեսզի Ձեր այս նոր հանգամանքում շարունակեք ծառայել Քրիստոսի Եկեղեցուն՝ նպաստելով նաեւ Հայ եւ Անգլիկան եկեղեցիների եղբայրությանը:

Լիահույս ենք, որ Ձեր հարուստ փորձառությունը ներդնելու եք ավելի զորացնելու Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսը եւ նրա գործունեությունը՝ առավել արդյունավետ ծառայելու Եւրոպայի եկեղեցիներին՝ նպաստելով եկեղեցիների եւ տարբեր հասարակական ու պետական հաստատությունների երկխոսությանը, մարդկային խաղաղ եւ բարօր կյանքի կերտմանը Եւրոպայում եւ ողջ աշխարհում»:

«ԵՂԻՑԻ ԼՈՅՍ» ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ «Ոսկե ծիրան» միջազգային ամենամյա կինոփառատոնի առիթով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սահմանած «Եղիցի լոյս» մրցանակի

«Եղիցի լոյս» մրցանակի հանձնումը

հանձնման արարողությունը: Հայոց Եկեղեցու հաստատած այս մրցանակն այս տարի շնորհվեց մեծանուն կինոռեմադրիչ Արտավազդ Փելեշյանին:

Արարողության սկզբում «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի մասնակիցների եւ հյուրերի ներկայությունը Ս. Էջմիածնում ողջունեց Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Գեւորգ եպ. Սարոյանը: Այնուհետեւ շնորհակալական խոսքով հանդես եկավ կինոփառատոնի հիմնադիր-տնօրեն Հարություն Խաչատրյանը, որ շնորհավորեց մեծարյալ արվեստագետին Հայ Եկեղեցու մրցանակին արժանանալու կապակցությամբ:

Ապա Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպ. Մանուկյանն ընթերցեց հայրապետական վկայագիրը, որից հետո ներկաների ծափողջույնների ներքո Ամենայն Հայոց Հայրապետը «Եղիցի լոյս» մրցանակը շնորհեց ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ժողովրդական արտիստ Արտավազդ Փելեշյանին՝ հոգեւոր, մշակութային ու մարդասիրական արժեքների քարոզչության եւ համաշխարհային կինոարվեստում մեծ վաստակի համար:

Մրցանակաբաշխությունից հետո պրն. Փելեշյանը իր մասնավոր շնորհակալությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ իրեն նման բարձր պատվի արժանացնելու համար:

Արարողության ավարտին ներկաներին իր հայրապետական օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Գոհունակությամբ անդրադառնալով շնորհալի արվեստագետի ստեղծագործական գործունեությանը՝ Վեհափառ Հայրապետն ասաց. «Տիար Փելեշյանը ռեժիսոր-վավերագրողի իր գործերով, բարձրարժեք վավերագրական ֆիլմերով բազմաթիվ մարդկանց հոգիներում զորացրել է ձգտումը դեպի բարին ու արդարը, վեր հանել մարդկային ներաշխարհի հույզերը, կամքի ուժը եւ ստեղծագործական թռիչքը, ներկայացրել Աստծո արարչագործության պսակ մարդ արարածին իր ողջ վեհությամբ, տքնելու ու կերտելու զորությամբ, ամրապնդել նաեւ մեր ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, իր ուրույն տեսանկյունով ներկայացրել հայ ժողովրդին»: Իր խոսքում Նորին Սրբությունը նշեց նաեւ, որ մեր ժողովրդի համար հպարտություն է այսպիսի զավակ ունենալը, որ համաշխարհային կինոյի ասպարեզում համարվում է մեծագույն գործիչ եւ կինեմատոգրաֆիայի դասական, նրագործերը համամարդկային նշանակություն ունեն եւ նույնիսկ մեր ժողովրդի մասին պատմող գործերը դուրս են գալիս նեղ սահմաններից, ազգայինի միջոցով ներամփոփում ու տարածում համամարդկայինը: Վերստին շնորհավորելով տիար Փելեշյանին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը քաջառողջություն, արեւշատություն եւ ստեղծագործական նորանոր հաջողություններ մաղթեց մեծարյալին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՎՍՏՐԱՅԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ

Հուլիսի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց մի խումբ ավստրիացի կաթոլիկ ուխտավորների՝ առաջնորդությամբ Ավստրիայի Կաթոլիկ Եկեղեցու Գուրկի թեմի առաջնորդ եպիսկոպոս Ալոյս Շվարցի:

Ողջունելով ուխտավորների այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ նման այցելությունները նպաստում են ոչ միայն փոխճանաչողությանը, այլեւ երկու ժողովուրդների հարաբերությունների սերտացմանն ու մշակույթների հարստացմանը: Նորին Սրբությունն իր խոսքում կարեւորեց ուխտագնացությունների դերը քրիստոնյայի կյանքում՝ ընդգծելով, որ դրանք առիթ են ստեղծում միասնաբար աղոթք բարձրացնելու առ Աստված՝ ժողովուրդների բարօրության, աշխարհի խաղաղության եւ Քրիստոսի Եկեղեցու առաքելության արդյունավորման համար:

Անդրադառնալով Հայաստանյայց Առաքելական եւ Հռոմի Կաթոլիկ եկեղեցիների սերտ հարաբերություններին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորապես իր շնորհակալությունը

հայտնեց Ավստրիայի կաթոլիկ կարդինալ Շոնբոռնին այն աջակցության համար, որի շնորհիվ Հայ Եկեղեցու հոգեւոր սպասավորները հնարավորություն են ստանում իրենց ուսումը շարունակելու Ավստրիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Վեհափառ Հայրապետը պատասխանեց նաեւ ուխտավորների հարցերին, որոնք վերաբերում էին Հայ Եկեղեցու պատմությանը, հասարակական կյանքում Եկեղեցու դերակատարությանը եւ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական ծրագրերին ու գործունեությանը:

Հանդիպմանը ներկա էր նաեւ Ավստրիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Արման Կիրակոսյանը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅ-ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հուլիսի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Երեւանում անցկացվող հայ-ռումինական գործարար համաժողովի մասնակիցներին:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով հայ եւ ռումին գործարարներին, կարեւորեց նման համաժողովների անցկացումը՝ նշելով, որ դրանք ոչ միայն ավելի են ամրապնդում երկու ժողովուրդների բազմադարյա հարաբերությունները, այլեւ գործնականում նպաստում են երկրների միջեւ տնտեսական կապերի աշխուժացմանը եւ արդյունավետ համագործակցության հաստատմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում ընդգծեց Ռումինիայի հայ համայնքի եւ հայոց թեմի դերակատարությունը երկու ժողովուրդների բարեկամության զորացման գործում՝ գոհունակություն հայտնելով նաեւ Ռումինիայի կյանքի տարբեր ոլորտներում հայորդիների բերած կարեւոր ներդրումի համար:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Հայ Առաքելական եւ Ռումին Ուղղափառ եկեղեցիների ջերմ հարաբերություններին, հովվապետերի փոխադարձ եղբայրական այցերին:

Վերջում Նորին Սրբությունը, իր օրհնությունը բերելով համաժողովի մասնակիցներին, հաջողություններ մաղթեց նրանց օգտաշատ նախաձեռնությանը՝ ի բարօրություն երկու երկրների:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԵՒ ՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ

Հուլիսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Արգենտինայի Բուենոս Այրես քաղաքի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության «Մարի Մանուկյան» վարժարանի ավարտական սաներին՝ ուղեկցությամբ Բուենոս Այրեսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Մաղաքիա աբեղա Ամիրյանի եւ Կանադայի Տորոնտո քաղաքի Ս. Երրորդություն Եկեղեցու «Ս. Սահակ-Մեսրոպ» դպրոցի աշակերտներին՝ առաջնորդությամբ Տորոնտոյի Ս. Վարդան եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Գեղարդ ավագ քահանա Կարապետյանի:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը, ողջունելով Երիտասարդ հայորդիների այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, կարեւորեց այդպիսի ուխտագնացությունների դերը նրանց կյանքում՝ նշելով, որ դրանք հնարավորություն են ընձեռում ավելի խորությամբ ճանաչելու իրենց Հայրենիքը, պատմությունն ու մշակույթը, նպաստում Սփյուռքում հայկական ոգու պահպանմանն ու զորացմանը, Եկեղեցու եւ Հայրենիքի հանդեպ սիրո ամրապնդմանը:

Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց երկու դպրոցների վարչության անդամներին, հոգաբարձուներին ու մանկավարժներին, որ հայ երիտասարդներին կրթում ու դաստիարակում են ազգային արժեքներով եւ հայրերի սուրբ հավատքով:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց նաեւ աշակերտների հարցերին, որոնք վերաբերում էին Հայ Եկեղեցու պատմությանը, միջեկեղեցական հարաբերություններին, հասարակական կյանքում Եկեղեցու դերին:

ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԱՍԱՄԲԼԵԱՆ ԱԹԵՆՔՈՒՄ

Հունիսի 26-ից հուլիսի 1-ը Աթենքում տեղի ունեցավ Միջխորհրդարանական Ուղղափառության Վեհաժողովի գերագույն ասամբլեան՝ «Խորհրդարանական ժողովրդավարություն-քրիստոնեություն-ուղղափառություն՝ արժեքներ եւ նշանակություններ» խորագրով: Ասամբլեան նվիրված էր վեհաժողովի հիմնադրաման 20-ամյակին:

Ասամբլեայի ընթացքում ներկայացվեցին եւ քննարկվեցին այնպիսի հարցեր, ինչպիսին են «Ուղղափառությունը եւ ժողովրդավարությունը», «Արդի դարաշրջանի արժեքները եւ իմաստները քրիստոնեության սահմանմամբ», որից հետո բուն թեմայի ծավալուն քննարկում եղավ:

Հունիսի 29-ին տեղի ունեցավ Վեհաժողովի 20-ամյակի հանդիսավոր արարողությունը, որի ընթացքում ընթերցվեց Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ.-ի ուղերձը՝ ուղղված Միջխորհրդարանական Ուղղափառության Վեհաժողովի անդամներին: Ուղերձում ասված էր. «Ուրախություն է Մեզ համար Ուղղափառության Միջխորհրդարանական Վեհաժողովի հոբելյանական 20-ամյակի առիթով արդյունավետ աշխատանքի բարեմաղթանքներով Հայրապետական մեր օրհնությունները հղել Ձեզ հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Գոհունակություն էր Մեզ համար դեռեւս 2010 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունել Ուղղափառության Միջխորհրդարանական Վեհաժողովի մասնակիցներիդ եւ ծանոթանալ կազմակերպության հետ, որը սպեղծվեց մեր ժողովուրդների համար վճռորոշ ժամանակներում, երբ Արեւելյան Եւրոպայի շատ երկրներ թոթափեցին ապրվածամերժ ռեժիմները եւ հիմքերը դրեցին ազատ եւ ժողովրդավար պետությունների կառուցման: Հոգու բերկրանքով ենք անդրադառնում, որ պատմական այս ժամանակշրջանում ստեղծված Ուղղափառության Միջխորհրդարանական կառույցն այսօր քսանհինգ եւ ավելի անդամներ ունի, եւ լինելով արեւելյան քրիստոնական արժեքների կրողը՝ մեր Եկեղեցիների հավատավոր զավակների միջոցով ծառայում եւ նպաստ է բերում մարդկության եւ մեր ժողովուրդների առջեւ ծառացած եւ համաշխարհային հանրությանը հուզող ժամանակի մարտահրավերների հաղթահարմանը:

Քրիստոնեական աշխարհը իր ծանրակշիռ ներդրումն է ունեցել համաշխարհային քաղաքակրթության զարգացման եւ համամարդկային արժեքային համակարգի ստեղծման գործում: Հայաստանը, որն առաջինն է քրիստոնեությունը հռչակել որպես պետական կրոն, իր հինավուրց Առաքելական Սուրբ Եկեղեցիով այսօր էլ հավատարիմ մնալով հանդուրժողականության եւ համերաշխության գաղափարներին, պատրաստակամ է միջեկեղեցական եւ միջկրոնական ամենալայն երկխոսության ու համատեղ աշխատանքի՝ ի նպաստ խաղաղության եւ ժողովուրդների ու ազգերի բարօրության:

Ուրախությամբ ենք անդրադառնում, որ Հայաստանի Հանրապետությունը եւ Հայ Առաքելական Եկեղեցին ակտիվ մասնակցություն ունեն միջազգային խաղաղարար կազմակերպությունների աշխատանքներում: Կարեւորում ենք նաեւ համագործակցությունը Ուղղափառության Միջխորհրդարանական Վեհաժողովի շրջանակներում, որի ապացույցն է Վեհաժողովում ՀՀ ԱԺ պատվիրակության արդյունավետ գործունեությունը: Լիահույս ենք, որ խորհրդարանական դիվանագիտությունը ժամանակակից կնճռոտ խնդիրները փակուղուց դուրս բերելու առավել արդյունավետ ուղի է, եւ այդ գործում կարեւոր է նաեւ Ձեր կազմակերպության դերը: Վեհաժողովը գործունեություն է ծավալում աշխարհի չորս կողմերում եւ տարբեր միջոցառումների ու նախաձեռնությունների իրագործման միջոցով փորձում նպաստել ժողովուրդների փոխհարաբերությունների բարելավմանը, գոյություն ունեցող տարաձայնությունների հաղթահարմանը եւ մարդկության

կյանքում վճռորոշ դեր ունեցող քաղաքական ու կրոնական հոսանքների միջև համագործակցության զարգացմանը:

Այս առթիվ գնահատանքով ենք անդրադառնում Միջխորհրդարանական Վեհաժողովի կողմից ընդունված «Տարածաշրջանում քրիստոնեական հոգևոր և մշակութային հուշարձանների պահպանման ու Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» և «Օսմանյան կայսրությունում քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի, հույների և ասորիների նկատմամբ իրականացված ցեղասպանության վերաբերյալ» բանաձևերին, որոնցով Վեհաժողովը վկայեց համամարդկային արժեքների հավատարիմ պաշտպանի իր կոչումը:

Վստահ ենք, որ ունենալով երկու դասանմյակների հարուստ փորձառություն՝ Միջխորհրդարանական Վեհաժողովը իր հետագա գործունեությամբ կշարունակի զգալի ներդրում ունենալ խաղաղության ամրապնդման, միջկրոնական դարաձայնությունների հարթման, մշակութային և հոգևոր համագործակցության ոլորտներում արդյունավետ միջոցներ գտնելու գործում. «Այլ ամենայն ինչ յԱստուծոյ, որ հաշտեցոյցն զմեզ ընդ Իւր ի ձեռն Քրիստոսի, և եր մեզ զպաշտօնն հաշտութեան» (Բ. Կոր. Ե. 18):

Առ Աստված աղոթքով Տիրոջ զորակցությունն ենք հայցում Ուղղափառության Միջխորհրդանական Վեհաժողովի մասնակիցներիդ, մաղթում արդյունավոր աշխատանք՝ հանուն աշխարհում խաղաղության ու ապահովության հաստատման և քրիստոնեական արժեքների տարածման:

Այլև հայցում ենք, որ Տերը անշրջելի առաջընթաց ու բարգավաճում պարգևի Ձեր երկրներին ու ասպվածասեր Ձեր ժողովուրդներին»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գասրեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հանդիսությանը որպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ մասնակցեց Տավուշի թեմի առաջնորդ Տ. Եզնիկ արքեպ. Պետրոսյանը:

«ԿՐՈՆՆԵՐԻ ԵՒ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԼՅԱՆՍԻ» ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հուլիսի 26-28-ը Նորվեգիայի Թրոնդհայմ քաղաքում տեղի ունեցավ «Կրոնների և բնապահպանության ալյանսի» ներկայացուցիչների երկրորդ հանդիպումը: Հանդիպմանը մասնակցում էր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Էջմիածին քաղաքի պատվիրակությունը, որի կազմում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պետ Տ. Հովակիմ եպ. Մանուկյանը, Էջմիածնի քաղաքապետ տիար Կարեն Գրիգորյանը և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Կլոր Սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի գործադիր պետ տիար Կարեն Նազարյանը:

Հանդիպումը, որին մասնակցում էին աշխարհի ավելի քան տասը հավատքային խմբերի ներկայացուցիչներ՝ քրիստոնյաներ, հրեաներ, մահմեդականներ, սիկխեր, հինդուներ, դաոիստներ, շինտոներ, կոնֆուցիոսականներ, բուդդիստներ, նպատակ էր հետապնդում զարգացնելու կանաչ ուխտագնացությունը՝ հաշվի առնելով բնապահպանությունն ու դրա հրամայականները:

Հանդիպման ընթացքում ելույթով հանդես եկան Եւրախորհրդի Գլխավոր քարտուղար Տորյորն Յագլանդը, Թրոնդհայմի քաղաքապետ Ռիտա Օպերվիկը, Կոնֆուցիոսական համաշխարհային էկոլոգիական ալյանսի գլխավոր քարտուղար և Պեկինի համալսարանի պրոֆեսոր Տու Վեյմինգը, ինչպես նաև համաշխարհային տարբեր կրոնների ներկայացուցիչներ:

Հայաստանի պատվիրակության անդամները կազմակերպեցին հայկական ծեսով աղոթքի արարողություն, ներկայացրեցին «Կանաչ ավանդական կերակուր» ծրագիրը, ինչպես նաև Էջմիածնի քաղաքապետարանի ու Մայր Աթոռի կողմից իրականացվող ծրագրերը: Հանդիպման մասնակիցները հնարավորություն ունեցան նաև ծանոթանալու Թրոնդհայմ քաղաքում իրականացվող բնապահպանական ծրագրերին: Վերջում հայաստանյան պատվիրակությունը հրավեր ուղղեց «Կրոնների և բնապահպանության ալյանսին» հաջորդ հանդիպումը գումարել Հայաստանում:

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԿՐԹՕՋԱԽՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ

Հունիսի 23-29-ը Ծաղկաձորի Գրողների տուն հասպատությունում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության կենտրոնը, World Vision միջազգային քրիստոնեական բարեգործական կազմակերպության հայաստանյան գրասենյակի աջակցությամբ, անցկացրեց կիրակնօրյա կրթօջախների ուսուցիչների համագումար վերապատրաստման ձեւաչափով: Համագումարին մասնակցում էին հայաստանյան բոլոր թեմերից շուրջ 170 ուսուցիչներ: Դասընթացի մեկնարկին բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի ՔԴԿ տնօրեն Տ. Վարդան վարդապետ Նավասարդյանը, ապա խոսք ասեցին նաեւ World Vision միջազգային քրիստոնեական բարեգործական կազմակերպության հայաստանյան գրասենյակի կառավարության ու եկեղեցու հետ կապերի պատասխանատու Կարինե Հարությունյանը, Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել արքեպ. Քարամյանը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Կարինե Աճեմյանը, ԿԳՆ ԿԱԻ փոխտնօրեններ Անահիտ Բախշյանն ու Վարդան Ղանդիլյանը: Դասընթացի օրակարգում ընդգրկված էին Ատրվածաշնչի ամենօրյա սերտողություններ, եկեղեցու պատմության, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանաբանության, ծիսական համակարգի, Սուրբ Գրքի եւ եկեղեցաբանական տարաբնույթ հարցերի վերաբերյալ դասախոսություններ, որոնք ներկայացվեցին ինչպես հոգեւորականների, այնպես էլ աշխարհական մասնագետ բանախոսների կողմից:

Ծրագրի շրջանակներում առաջին անգամ ուխտագնացություն կազմակերպվեց դեպի Հրազդանի Ս. Ատրվածածին եկեղեցի (Մաքրավանք), ինչպես նաեւ տեղի ունեցան խմբային աշխատանքներ եւ քննարկումներ մեթոդաբանության վերաբերյալ:

Համագումարի ընթացքում համերգային ծրագրով հանդես եկավ ԱՀԹ «Արարատ» հոգեւոր միությունը: Այնուհետեւ Կեչառիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում բոլոր մասնակիցները ներկա եղան երեկոյան ժամերգությանն ու քարոզին:

Դասընթացի ավարտին ներկաներն աղոթեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսի արեւշատության ու երկարամյա գահակալության համար:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի 30-31-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը՝ ընդլայնված կազմով:

Ժողովի սկզբում Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր գնահատականը բերեց խորհրդի անդամներին, որ ընդառաջ հրավերին ժամանել են Մայր Աթոռ՝ քննարկելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առջեւ ծառացած զանազան մարտահրավերներ, հայ հավատացեալոց կյանքը հուզող խնդիրներ:

Ժողովի նիստերն ատենապետեց Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքության պատրիարքական ընդհանուր փոխանորդ Տ. Արամ արքեպ. Աթեշյանը:

Գերագույն հոգեւոր խորհրդին Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված՝ Մայր Աթոռի միջոցառումների վերաբերյալ զեկույց ներկայացրեց հանձնախմբի ատենապետ, ԱՄՆ Արեւմտյան հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպ. Տերտերյանը: Ժողովականներն իրենց գնահատականը հայտնեցին հանձնախմբին՝ հանձնարարելով շարունակել միջոցառումների ամբողջացման եւ նախապատրաստման աշխատանքները:

Գերագույն հոգեւոր խորհուրդը նաեւ ի գիտություն ընդունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ.

ԳՀԽ-ի ժողով Մայր Աթոռում

Արշակ եպ. Խաչատրյանի զեկույցը Թեմական ուղենիշային կանոնադրության պահանջներին թեմերի կանոնադրությունների համապատասխանեցման գործընթացի վերաբերյալ:

Տեղեկություններ ներկայացվեցին սեպտեմբերի 21-28-ը Մայր Աթոռում գումարվելիք Հայ Եկեղեցու Ընդհանուր եպիսկոպոսաց ժողովի նախապատրաստական աշխատանքների մասին:

Եկեղեցական ներկայացուցչական ժողովի կանոնադրության նախագծի լրամշակման աշխատանքների մասին զեկույցով հանդես եկավ հանձնախմբի նախագահ, Տավուշի թեմի առաջնորդ Տ. Եզնիկ արքեպ. Պետրոսյանը: ԳՀԽ անդամները գնահատանքով ընդունեցին զեկույցը՝ թելադրելով հանձնախմբին շարունակել կանոնադրության լրամշակման գործընթացը:

Գերագույն հոգեւոր խորհուրդը քննության առավ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ, Արեւմտյան Եւրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Նորվան արքեպ. Զաքարյանի հրաժարական գրությունը, ինչպես եւ Ֆրանսիայի հայոց թեմում դրան առնչված զարգացումների հետ կապված հարցեր:

Հետ քննարկության Գերագույն հոգեւոր խորհուրդն ընդունեց Տ. Նորվան արքեպ. Զաքարյանի հրաժարականը Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդի, Արեւմտյան Եւրոպայի հայրապետական պատվիրակի պաշտոնից եւ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամությունից եւ խնդրանք ներկայացրեց Վեհափառ Հայրապետին հաստատելու այն:

Գերագույն հոգեւոր խորհուրդը նաեւ ափսոսանք հայտնեց հրաժարականում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հասցեին ուղղված անհիմն գնահատականների առնչությամբ: Գերագույն հոգեւոր խորհուրդն իր զորակցությունը հայտնեց Ֆրանսիայի հայոց թեմի թեմական խորհրդին ստեղծված իրավիճակի կարգավորման գործում՝ հորդորելով թեմի հավատացյալներին եւ ազգային հաստատություններին ու կազմակերպություններին՝ քրիստոնեական սիրո ոգով նպաստել Ֆրանսիայի հայոց թեմի բարեկարգությանը եւ շինությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ՍՏԵՂԾՎԵԼ Է ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ստեղծվել է Եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակ:

Հուլիսի 10-ից հայրապետական տնօրինությամբ Եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն է նշանակվել Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

«ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆԻ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ

Մանուել Աղամյանը (Մեծ Բրիտանիայի թեմ)

«ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆԻ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ

Էդգարին Լ. Գրիգորյանը (ԱՄՆ Արեւմտյան թեմ)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ